ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՀԿԱԾ-ՓԱԲ-2020/1

ք.Երևան 05.02.2020թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Գլխավոր քարտուղար Գագիկ Միրիջանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա՝ մի կողմից և «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ա.Հովսեփյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր), հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1.Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի պարբերաբար ներկայացվող առաջադրանքների հիման վրա կատարել թիվ 1 հավելվածով նախատեսված ծառայության բնութագրին և սակագներին համապատասխանող փորձաքննությունը և դրանց արդյունքների հիման վրա կազմել եզրակացություն (այսուհետ նաև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համարը:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Կատարողից պահանջել առաջադրանք հիման վրա և սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան ապահովել փորձաքննության կատարումը, եզրակացության կազմումը և իրեն տրամադրումը 20 /քսան/ աշխատանքային օրվա ընթացքում.

2.1.2. հարցում անել Կատարողին փորձաքննության կատարման ընթացքի վերաբերյալ՝ առանց խոչընդոտելու վերջինիս աշխատանքին,

2.1.3. հրաժարվել առաջադրանքի կատարումից և պահանջել վաղաժամկետ դադարեցնել տվյալ առաջադրանքի հիման վրա այն՝ միաժամանակ Կատարողին վճարելով տվյալ առաջադրանքի համար ըստ Հավելվածների նախատեսված գնի 20 (քսան) տոկոսը, եթե փորձագետն արդեն ձեռնամուխ է եղել փորձաքննության կատարմանը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. չմիջամտել փորձաքննության կատարմանը,

2.2.2. Կատարողի գրավոր պահանջի /միջնորդության/ հիման վրա, հնարավոր սեղմ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան գրավոր պահանջը ստանալու օրվանից սկսած 20 (քսան) օրվա ընթացքում, վերջինիս տրամադրել փորձաքննության կատարման

համար անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ ելակետային տվյալներ /այսուհետ՝ հետազոտելի օբյեկտ/,

2.2.3. ըստ անհրաժեշտության, Կատարողի պահանջով, մասնակցել փորձաքննությանը,

2.2.4.Հատուցել Կատարողի կողմից փորձաքննության կատարման ընթացքում կատարած փաստացի ծախսերը, սակայն ոչ պակաս պատվիրված փորձաքնության արժեքի 20% չափով, եթե փորձաքննության կատարման անհնարինությունը ծագել է ոչ Կատարողի մեղքով և այնպիսի հանգամանքներից, որոնց համար Կատարողը պատասխանատվություն չի կրում:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել իրեն տրամադրել առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ հետազոտելի օբյեկտները

2.3.2. Պատվերի հիման վրա փորձաքննության կատարման ընթացքում ի հայտ եկած նոր հանգամանքների հետևանքով, Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամկետով, պահանջել երկարաձգելու փորձաքննության կատարման ժամկետը,

2.3.3. Պատվիրատուից պահանջել վճարել առաջադրանքի հիման վրա իրականացվող փորձաքննության կատարման համար նախատեսված գինը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1.Պատվիրատուի կողմից ներկայացված առաջադրանքի հիման վրա, սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարել փորձաքննություն (հետազոտություն, փորձարկում, գնահատում)՝ տվյալ ոլորտը կարգավորող օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ինչպես նաև ընդունված տեխնոլոգիաների ու մեթոդների համաձայն,

2.4.2.Ապահովել Պայմանագրի առարկային վերաբերվող տեղեկությունների գաղտնիությունը:

2.4.3.Փորձաքննություն կատարումն իրականացնել անձամբ և միայն Պատվիրատուի հանձնարարությամբ ու օրենքով սահմանված կարգով, Պայմանագրի Հավելվածներով հաստատված սակագներով, որոնք կարող են փոփոխվել Կողմերի լրացուցիչ գրավոր համաձայնագրով: Գնացուցակը և համաձայնագրերը հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

2.4.4.Փորձաքննություն կատարելու անհնարինության դեպքում համապատասխան տեղեկություն ուղարկել Պատվիրատուին 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում

2.4.5. միայն Պատվիրատուի գրավոր համաձայնությամբ փորձաքննության (հետազոտության, փորձարկման, գնահատման) կատարմանը ներգրավել երրորդ անձի,

2.4.6. Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ներկայացվելու օրվանից սկսած 2 /երկու/ աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված տեխնիկական թերությունները:

3.Կատարման ժամկետները

3.1. Փորձաքննության կատարման ժամկետն որոշվում է Պայմանագրի 1.1. կետով: Եթե այդ ժամկետն անբավարար է գնահատում կատարելու համար, ապա հանձնարարությունը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում Կատարողը պարտավոր է Պատվիրատուի հետ համաձայնեցնել գնահատման կատարման փաստացի ժամկետը:

3.2. Փորձաքննության կատարման ժամկետը սկսվում է հետազոտելի օբյեկտը Կատարողի կողմից զննություն կատարելուն հաջորդող աշխատանքային օրվանից և ավարտվում է համապատասխան եզրակացությունն Պատվիրատուին ուղարկելու օրը:

3.3. Փորձաքննության կատարումն ավարտելուն պես Կատարողը հեռախոսագրով հայտնում է Պատվիրատուին փորձաքննության կատարումն ավարտված լինելու մասին:

3.4. Փորձաքննության համար անհրաժեշտ տեղեկություն տրամադրելու Կատարողի գրավոր պահանջի / միջնորդության/ օրվանից մինչև Պատվիրատուի կողմից դրանց տրամադրելու օրն ընկած ժամանակամիջոցը փորձաքննության կատարման ժամկետի մեջ չի հաշվարկվում:

4.Հետազոտելի օբյեկտների տրամադրման և ստացման կարգը

4.1. Պատվիրատուի առաջադրանքին կից ներկայացվող հետազոտելի օբյեկտները հանձնվում են Կատարողն և փորձաքննության ավարտից հետո մնացած մասը Պատվիրատուին է վերադարձվում փաթեթավորված, կնիքված վիճակում:Ելնելով անհրաժեշտությունից, հետազոտելի օբյեկտը կարող է Կատարողի կողմից հետազոտվել հետազոտելի օբյեկտի գտնվելու վայրում:

4.2. Փորձաքննության ընթացքում, եթե համապատասխան հետազոտության մեթոդիկայով նախատեսված է հետազոտելի օբյեկտի վնասում կամ ոչնչացում, ապա դա իրականացվում է առանց Պատվիրատուի հետ համաձայնեցման:Ընդ որում հետազոտելի օբյեկտի կամ ոչնչացման չափը նշվում է եզրակացության մեջ, և այն չի կարող գերազանցել համապատասխան հետազոտության մեթոդիկայով նախատեսված չափը:

5.Մատուցված ծառայության հանձնման և ընդունման կարգը

5.1 Ծառայության արժեքի չափի վերաբերյալ Կատարողը Պատվիրատուին հայտնում է հաշիվ-ապրանքագիր լրացնելու միջոցով, որը Պատվիրատուին է հանձնվում եզրակացության հետ միասին:

5.2 Յուրաքանչյուր ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների համար Պատվիրատուն Կատարողին վճարում է մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 10-ը:

5.3 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5.4 Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Պայմանագրի Հավելված № 9-ով սահմանված հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

5.5 Կողմերի փոխհամաձայնությամբ Պատվիրատուն կարող է Կատարողին տրամադրել կանխավճար:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում դրա երկկողմանի ստորագրման օրվանից և գործում է 1 /մեկ/ տարի ժամեկտով:

6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել Կողմերից յուրաքնաչյուր նախաձեռնութամբ մեկ ամիս առաջ գրավոր մյուս կողմին տեղեկացնելու պարագայում: Եթե կողմերը՝ մինչև Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը, միմյանց չեն ծանուցում Պայմանագրի լուծելու վերաբերյալ, Պայմանագրի ժամկետը համարվում է կնքված անորոշ ժամկետով:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը («ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ»)

7.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է սույն պայմանագիրը կնքելուց հետո ծագած անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, նյութերի, այլ միջոցների ձեռք բերման անհնարինությունը և այլն, որոնք անհնարին են դարձնում Կողմերի՝ սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարումը:

7.2. Այն Կողմը, որի համար ստեղծվել են անհաղթահարելի հանգամանքները, այդ մասին պետք է 10 աշխատանքային օրում տեղեկացնի մյուս Կողմին:

7.3. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով մյուս Կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ գրավոր համաձայնագիր կնքելու միջոցով: Սույն պայմանագրի հավելվածները, փոփոխությունները և լրացումները դրա անբաժանելի մասն են:

8.2. Կողմերը սույն պայմանագրով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

8.3. Կողմերը պարտավորվում են սույն պայմանագրի պայմաններից բխող, ինչպես նաև Կողմերի պարտականությունների կատարման կապակցությամբ ծագած վիճելի հարցերը լուծել բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ դատական կարգով՝ ՀՀ դատարանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.4. Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզուներով, կազմված է 9 հավելվածներից, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

9. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	**ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ**
Հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 41ա	Հասցե՝ ք. Երևան, Իսակովի 24
ՀՎՀՀ 01223338	հեռ.՝ (374-10) 77-77-10
Հ/Հ 900011288025	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն,
Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն	Երևանի թիվ 1 ՏԳԲ
	ՀՀ՝ 900018005588
	ՀՎՀՀ՝ 01836525
Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար	Հեռ (+374 10) 77-77-10
Գագիկ Միրիջանյան	Տնօրեն՝ Ա.Հովսեփյան

Հավելված թիվ 9
«------» փետրվարի 2020թ.
կնքված №ՀԿԱԾ-ՓԱԲ-2020/1
պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ___
ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան ___.___. 2020թ.

Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝
Պայմանագրի համարը՝

Պատվիրատուն՝ _____ և Կատարողը՝ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ն, ի դեմս՝ տնօրեն Ա. Ջավաղյանի, սույն արձանագրությամբ հավաստում են, որ վերը նշված պայմանագրով նախատեսված ծառայությունը կատարված և դրա համար վճարումը կատարված է պայմանագրի պայմաններին համապատասխան:

Կատարողը _____ թ.-ից _____թ.-ն ընկած ժամանակահատվածում կատարել է նշված պայմաններով ծառայությունը՝

Ծառայության համառոտ նկարագիրը (փորձաքննության (հետազոտության, փորձարկման, գնահատման) անվանումը՝ ըստ տեսակների, ենթատեսակների յուրաքանչյուր հետազոտվող միավոր օբյեկտի համար))	Փորձաքննության (հետազոտության, փորձարկման, գնահատման) քանակական ցուցանիշները (միավորների քանակը)	միավորի (քանակական չափանիշի) գինը՝ ներառյալ ԱԱՀ	վճարման ենթակա գումարը՝ (ներառյալ՝ ԱԱՀ)	Եզրակացության համարը
Ընդհամենը				

Սույն արձանագրությունը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից:

Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Ծառայության կատարման վերաբերյալ հարկային հաշիվները հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը (կցվում են):

Ծառայությունը ընդունեց՝

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
Հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 41ա
ՀՎՀՀ 01223338
Հ/Հ 900011288025
Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
Գագիկ Միրիջանյան

Ծառայությունը հանձնեց՝

ԿԱՏԱՐՈՂ՝

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Իսակովի 24
հեռ.՝ (374-10) 77-77-10
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն, Երևանի թիվ 1 ՏԳԲ
ՀՀ՝ 900018005588
ՀՎՀՀ՝ 01836525

Տնօրեն՝ Ա.Հովսեփյան